««Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա ՝Սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը ոչ ավանդական նկարչության գործընթացում

Հաստատություն ՝ Օշականի թիվ 8 Անահիտ մ/մ ՀՈԱԿ

Դաստիարակ ՝ Մարիամ Մխիթարյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1 Ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացումը նախադպրոցական տարիքում…….....5

1.2 Ստեղծագործական ունակությունների զարգացումը նախադպրոցական տարիքում.....9

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՈՒՂՂՎԱԾ ՍԱՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՈՉ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.....13

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....17

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը. Անձի ձևավորման սկիզբը նախադպրոցական տարիքն է: Վարքի, բնավորության գծերի, անձի տարբեր հատկությունների զարգացման հիմքերը դրվում են հենց նախադպրոցական տարիքում: Նախադպրոցական տարիքում են սկսում ի հայտ գալ և ձևավորվել երեխայի բարոյական և կամային դրսևորումները, որոնց ինքնաբուխ անմիջական ընթացքը նպատակաուղղված ուղղորդման կարիք ունի դաստիարակող մեծահասակների կողմից:

Շատ գիտնականներ համարում են, որ նախադպրոցականի ինքնուրույնության և նախաձեռնողականության ձևավորմանը նպաստում են մանկական գործունեության բոլոր ձևերը: Համաձայն Տ. Ի. Բաբայեվայի, Լ. Մ. Կլարինի աշխատանքների մանկապարտեզում երեխայի գործունեության բոլոր ձևերում անհրաժեշտ է այնպիսի պայմաններ ստեղծել, որպեսզի երեխան հնարավորություն ունենա դրսևորել ինքնուրույն վարքագիծ: Կարող ենք ասել, որ երեխայի ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացման հարցը մինչ օրս էլ համարվում է նախադպրոցական մանկավարժության արդի խնդիրներից, իսկ ստեղծագործ անհատականության ձևավորումը մանկավարժական տեսության և պրակտիկայի կարևորագույն խնդիրներից մեկն է: Հոգեբանական տեսանկյունից նախադպրոցական տարիքը ստեղծագործական կարողությունների զարգացման համար բարենպաստ ժամանակաշրջան է, քանի որ այս տարիքի երեխաները չափազանց հետաքրքրասեր են և մեծ ցանկություն ունեն իրենց շրջապատող աշխարհը ուսումնասիրելու: Ստեղծագործական ունակությունները կարելի է անվանել նախադպրոցականի բազմաթիվ հատկությունների միաձուլում: Մանկավարժի խնդիրն է արթնացնել երեխաների ստեղծագործական ակտիվությունը, խթանել ստեղծագործական գործունեության մեջ ներգրավվելու ցանկությունը:

Ուստի թեմայի արդիականությունը պայմանավորված է ոչ ավանդական նկարչական տեխնիկայով նախադպրոցականների ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացման ուսումնասիրության անհրաժեշտությամբ:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել սաների ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացման միջոցները ոչ ավանդական նկարչության գործընթացում:

Հետազոտության նպարակից բխում են հետևյալ խնդիրները.

- Վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականություն:
- Ուսումնասիրել ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացման գործընթացը նախադպրոցական տարիքում:
- Ուսումնասիրել ստեղծագործական ունակությունների զարգացման գործընթացը նախադպրոցական տարիքում:
- Հիմնավորել ոչ ավանդական նկարչության գործընթացը որպես նախադպրոցականների ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացման արդյունավետ միջոց:

Հետազոտության ընթացքում կիկրառվել են հետևյալ **մեթոդները**.

- մասնագիտական գրականության ուսումնասիրություն և վերլուծություն
- դիտում, զրույց, հարցում

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից՝ տեսական և հետազոտական, եզրակացություններից և գրականության ցանկից: Համակարգչային շարվածքով կազմում է 18 էջ:

ԳԼՈՒԽ 1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1 Ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացումը նախադպրոցական տարիքում

Լեզվաբանական բառարանում ինքնուրույն հասկացությունը բնութագրվում է հետևյալ իմաստներով.

- ✓ որևէ մեկից կամ որևէ բանից կախման մեջ չգտնվող, անկախ,
- ✓ առանց ուրիշների օգնության գործելու, մտածելու, վարվելու ընդունակ
- ✓ կողմնակի ազդեցությունից ազատ, ինքնատիպ:

Դ. Դմիտրիևայի ռուսերեն բացատրական բառարանում տրվում է ինքնուրույնության հետևյալ սահմանումը. «Ինքնուրույն են համարում այն մարդուն, որը որոշակի գործունեություն իրականացնելու համար ունի բավարար նախաձեռնողություն և անկախություն» [1, էջ 19]:

Ի. Բոուլբին գտնում է, որ երեխայի զարգացման նպատակը անկախ դառնալն է: Նա համարում է, որ երեխայի մեջ փոքր հասակում առկա է կախվածության զգացողություն, որը տարիների հետ նվազում է արթնացնելով անկախության զգացումը: Հեղինակը նշում է, որ երբ երեխան սկսում է քայլել և խոսել, նշանակում է նա խիստ կախվածությունից հասնում է հարաբերական անկախության [1, էջ 20]:

Մի շարք հեղինակներ (Է. Դեսի, Ռ. Ռայան) ինքնուրույնությունը դիտում են որպես բնածին հատկություն, որը սերտորեն կապված է և պայմանավորված է ինչպես կամքով, այնպես էլ անձի հուզական և մոտիվացիոն ոլորտներով:

Ըստ Ս Տեպլյուկի, ինքնուրույնությունը առաջանում է երեխայի կյանքի առաջին և երկրորդ տարիների ընթացքում: Մեծահասակի օգնությամբ երեխայի ինքնուրույնության հմտությունները ամրապնդվում և արտահայտվում են գործունեության տարբեր ձևերում [2, էջ 31]:

Նախադպրոցական տարիքի երեխան զարգանում է գործունեության միջոցով: Ի.Մ. Սեչենովը մանկության շրջանը արժևորելիս նշում է, որ այս շրջանում են երեխային փոխանցվում սոցիալական փորձի յուրացման պատրաստի ձևերը, որոնք հեշտացնում են աշխարհընկալման գործընթացը: Պատրաստի ձևեր ասելով նա նկատի ունի մանկան գործունեության ձևերը, որոնք իսկապես ձևավորվում և զարգանում են մեծահասակների օգնությամբ և նպաստում առաջացած տարբեր խնդիրների լուծմանը: Մանկական գործունեության ցանկացած ձև պարունակում է որոշակի հասարակական փորձ, որի յուրացման ընթացքում ծագում և լուծվում են իմացական բնույթի տարբեր խնդիրներ: Գործունեության զարգացումը նաև իմացական խնդիրների լուծման գործընթաց է: Յուրքանչյուր գործունեության, անձի որակի ձևավորման արդյունավետ զարգացումը կապված է մի շարք գործոնների

ազդեցության հետ: Ինքնուրույության դաստիարակությունը պայմանավորված է նրանով, թե ինչպես են մեծահասակի հետ համատեղ գործունեության ընթացքում երեխայի կողմից յուրացվում գործելու միջոցները, հնարները և դրանց ընդհանրացված ձևերը: Ինքնուրույնության զարգացման արդյունքը պետք է լինի այն, որ երեխան կարողանա նոր պայմաններում դրսևորել իր գիտելիքները, հմտությունները և դրա հետ մեկտեղ ձգտի գտնել ու իրականացնել գործելու նոր միջոցներ, հնարներ [2, էջ 49]:

Ինքնուրույնությունը դրսևորվում է գործունեության տարբեր ձևերում՝ կիրառական, տեսական, հաղորդակցման: Տարբերակվում են՝ իմացական ինքնուրույնություն, մտածողության ինքնուրույնություն, վարքի ինքնուրույնություն հասկացությունները: Նախադպրոցական տարիքի երեխաների ինքնութույնությունը դրսևորվում է հաղորդակցման, խաղային, արդյունավետ, աշխատանքային գործունեության մեջ և վարքի ձևերում:

Ինքնուրույնությունն արտահայտվում է դեռևս վաղ տարիքից, սակայն կայուն անձնային որակ է դառնում ավագ նախադպրոցական տարիքում: Ինքնուրույնությունն անհրաժեշտ է երեխային՝ շրջապատում կողմնորոշվելու և առօրյա վարքի համար: Ինքնուրույնության զարգացումը կապված է երեխայի ընդհանուր զարգացման հետ և օրինաչափորեն ուղեկցում է նրան: Զարգացման ընթացքում երեխայի և սոցիալական միջավայրի միջև անխուսափելիորեն ստեղծվում են որոշակի փոխհարաբերություններ, կապեր, որոնցով էլ պայմանավորված է երեխայի անձի զարգացման բնույթը: Այդ ընթացքում կարևոր է, թե ինչպես է երեխան յուրացնում գործելու միջոցները և ինչպես է նրան հաջողվում դրանց իրականացումը:

Երեխայի ինքնուրույնության զրագացումը պայմանավորված է հետևյալ գործոնոորով՝ մեծահասակի առաջատար դերով և երեխայի անձնական ակտիվության, նախաձեռնության զարգացմամբ: Ինքուրույնության շարժիչ ուժն է դառնում այն հակասությունը, որ ստեղծվում է նախադպրոցական տարիքին բնորոշ երկու հիմնական մղումներից՝ գործել ինքնուրույն, անկախ մեծահասակից, բայց լինել մեծահասակի նման և օբյեկտիվ հնարավորությունների միջև: Այդ հակասությունը լուծվում է երեխայի դաստիարակության և զարգացման ավելի բարձր մակարդակով, երբ երեխան հմուտ է և տիրապետում է կարողությունների, գիտելիքների ավելի լայն շրջանակի: Նախադպրոցական մանկության տարիների ընթացքում երեխայի և մեծահասակի փոխհարաբերությունների բովանդակությունը, ոճը և բնույթը ենթարկվում են փոփոխությունների: Զգալիորեն նվազում են երեխայի կախվածությունը մեծահասակներից, կարծես թե երեխան ազատագրվում է

նրանցից: Երբեմն դա արտահայտվում է երեխայի կամավոր վարքում, անկարգություններում և այլն: Բայց այստեղ կարևորն այն է, որ երեխայի մեջ միաժամանակ առաջանում է առանց մեծերի օգնության գործելու միտումը: Նման վարքը վկայում է, որ արդեն ստեղծվել են ինքնուրույնության, նախաձեռնության հիմքերը, զգացվում է նաև երեխայի՝ նոր միջոցներ փնտրելու, իր շրջապատում նորություններ գտնելու ձգտումը:

Նախադպրոցական դաստիարակության մեջ միահյուսված են երկու ուղղություններ: Առաջինը. նախ երեխայից պահանջվում է մասնակցել, հնարավորության սահմաններում, մեծահասակների գործունեությանը: Երկրորդի նպատակն է ամեն կերպ զարգացնել երեխայի ինքնուրույնությունը, նախաձեռնությունն ու ակտիվությունը [2, էջ 30]:

Մանկության տարիներին ինքնուրույնության զարգացումը որոշ գիտնականներ կապում են ընդօրինակման հետ: Հաստատված է, որ վաղ տարիքում երեխայի ամենաուժեղ պահանջմունքը մեծահասակի հետ իմացական համագործակցությանը մասնակցելն է: Այդ ակտիվ պահանջմունքի իրականացումն արտահայտվում է մանիպուլյատիվ և կողմնորոշման գործողությունների արդյունավետ զարգացմամբ: Ընդօրինակումը ուսումնառության հետ մեկտեղ նպաստում է երեխաների գործունեության պարզ ձևերի զարգացմանը, որոնց ընդերքում և ծնվում են նախաձեռնող գործողությունների տարրերը: Ժ. Պիաժեի կարծիքով՝ ընդօրինակումը մեծ դերէ խաղում անձի ինքնուրույնության ձևավորման գործում:

Ընդօրինակման նշանակությունը առաջին հերթին այն է, որ մյուսներին ընդօրինակելով, կրկնելով որոշակի գործողություններ, դրանց կատարման եղանակները, երեխան սկսում է աստիճանաբար ինքն իրեն ընդօրինակել՝ ճշտությամբ վերարտադրելով յուրացվող հնարներն ու միջոցները: Դրա ընթացքում երեխան, սակայն, չի պատկերացնում, որ այդ ամենը ինքն ընդօրինակում է: Նա այնպիսի պահվածք է ընդունում, կարծես ինքնէ գտել այդ գործելու միջոցն ու վարքի ձևը: Ժ. Պիաժեն ուշադրություն է դարձնում այն փաստի վրա, որ երբ 5-6 տարեկան երեխային որևէ բան են բացատրում և խնդրում անմիջապես վերարտադրել, նա այնպիսի պահվածք է ընդունում ու այնպիսի դատողություններ անում, թվում է, թե ինքնուրույն է գտել այդ խնդրի լուծումը [6, էջ 18]:

Որոշ գիտնականներ էլ նշում են, որ միայն ընդօրինակումը չի կարող երեխայի ակտիվության զարգացման հիմք դառնալ: Անհրաժեշտ են նաև մեծահասակի դաստիարակչական ներգործությունը և ղեկավարումը:

Այսպիսով կարող ենք ասել, որ երեխայի ինքնուրույնության, նախազեռնողականության ձևավորմանը մեծապես նպաստում է և՛ մեծահասակի

դաստիարակչական ներգործությունը, ղեկավարումը, և՛ հաղորդակցումը, որը բնորոշվում է որպես մարդկանց ակտիվ փոխներգործություն, երբ երկու կողմերն էլ ակտիվ են, արդեն ենթադրվում է ինքնուրույնության և նախաձեռնության առկայություն:

1.2 Ստեղծագործական ունակությունների զարգացումը նախադպրոցական տարիքում

Գիտնականների, մանկավարժների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր երեխա բնության կողմից ստեղծող է: Որպես կանոն, նրա ստեղծագործական ունակությունները թաքնված են և միշտ չէ, որ լիովին իրականացվում են: Ստեղծելով այնպիսի պայմաններ, որոնք խրախուսում են երեխային ստեղծագործական աշխատանքով զբաղվելը, մենք կարող ենք արթնացնել երեխայի ստեղծագործական հակումները:

Ստեղծագործական գործունեությունը ծնում է որակապես նոր նյութական և հոգևոր, նախկինում երբեք չեղած արժեքներ: Ըստ իրականացման բնույթի և արդյունքի, ստեղծագործական գործունեությունը անկրկնելի է, հասարակական-պատմական և անհատական առումով՝ ինքնօրինակ և եզակի: Ստեղծագործական գործունեությունը մարդու աշխատանքում առաջացած ընդունակությունն է [5, էջ 98]:

Նախադպրոցական տարիքը դա այն շրջանն է, երբ ստեղծագործական գործունեությունը կարող է դառնալ ոչ միայն զբաղմունք շնորհալիների համար, այլ բոլոր երեխաների համար աննկատ խթան հանդիսանալ նրանց երևակայության և այլ ընդունակությունների զարգացման համար:

Աշխարհի կերպարային ընկալման հիմքում ընկած է երեխայի բարձր հուզականությունը և երևակայության անսահման հնարավորությունները: Հուզական և կերպարային աշխարհընկալման արդյունքում ի հայտ են գալիս և դրանց հիման վրա կառուցվում ստեղծագործական ընդունակությունները: Ի. Յ. Լերները, ուսումնասիրելով նախադպրոցականի ստեղծագործական ընդունակությունների դրսևորման եղանակները, առանձնացնում է ստեղծագործական գործունեության երեք փուլ, որոնք բնութագրում են միաժամանակ նախադպրոցահասակ երեխայի ստեղծագործելու և՛ ընթացքը և՛ մեխանիզմները:

Առաջին փուլը Ի. Յ. Լերները անվանում է մտահղացման ձևակերպման փուլ: Ստեղծագործելու մտահղացումը առաջանում է աստիճանաբար կուտակվող և հարստացող հուզազգացմունքային ոլորտի և ձևավորվող հուզական

տպավորությունների հիման վրա, որոնք երեխայի մեջ ձևավորում են որոշակի կերպարային պատկերացումներ, դրանք ամրապնդվում են գեղագիտական փորձով, և երեխան փորձում է այդ ամենը անհապաղ որևէ կերպ վերարտադրել: Կրտսեր նախադպրոցական տարիքում ստեղծագործելու մտահղացումն իրադրային է, պայմանավորված անսպասելի ակնթարթային տպավորություններով, այն արտահայտվում է հիմնականում նկարելու ցանկությամբ: Ավագ նախադպրոցական տարիքում ստեղծագործելու մտահղացումն ավելի կայուն բնույթի է, այն կարող է արտացոլվել գեղագիտական գործունեության տարբեր ձևերում: Երեխան ընդունակ է ստեղծագործելու կերպարվեստի միջոցով, գեղարվեստական խոսքի, խաղի, երգարվեստի և պարարվեստի օգնությամբ, իսկ հաճախ՝ մի քանի ձևերում միաժամանակ: Հաջորդ փուլն, ըստ Ի. Յ. Լերների կերպարի ստեղծման փուլն է, որի ընթացքում երեխան կառուցում է իր մտահղացումը: Նշված գործընթացին բնորոշ են հետաքրքիր լուծումներ՝ այլընտրանքային մոտեցումներ, չափերի ընդգծված շեղումներ, երևակայական տարրեր, անհավանական լրացումներ: Սովորաբար, երեխան իր ստեղծագործական մտահղացումը արտահայտում է գունային երանգավորմամբ, հորինած կերպարներով, հեքիաթային հերոսների յուրովի պատկերմամբ և բոլորովին անհավանական անսովոր կերպարներով՝ հասկանալի միայն երեխայի կողմից:

Երրորդ փուլը ստեղծագործության վերլուծության փուլն է, որի ընթացքում երեխան պատրաստակամ և ամենայն պատասխանատվությամբ նկարագրում է սեփական ստեղծագործությունը, բացատրում մտահղացման իրականացման եղանակները, արտահայտիչ միջոցների ընտրությունը [6, էջ 39]:

Մ. Բոդենը առանձնացնում է ստեղծագործական գործունեության (կրեատիվության) երեք տիպ՝

<u>համադրական կրեատիվություն</u>՝ նոր մտքի բացահայտում՝ արդեն հայտնի մտքերի անսովոր համարդման (ասոցիացիայի) միջոցով,

<u>հետազոտական կրեատիվություն</u>՝ խնդրիների ձևակերպում, դեռևս չուսումնասիրված հիմնահարցերի առաջքաշում,

<u>ձևափոխող կրեատիվություն</u>՝ այնպիսի գաղափարների առաջդրում, որոնք նախկինում անհավանական էին թվում, հարացույցի վերափոխում:

Անձի ստեղծագործական ներուժը կարող է դիտարկվել նեղ և լայն իմաստով: Նեղ իմաստով՝ դա ստեղծագործական ունակություններն են, առաջին հերթին՝ երևակայությունն ու կրեատիվ մտածողությունը:

Լայն իմաստով՝ ստեղծագործական ուժը ներառում է նաև անձնային առանձնահատկությունները, որոնք նպաստում են ստեղծագործական ունակությունների իրացմանը՝ դրդապատճառները, որոշ հուզական և կամային որակներ:

Որոշ հոգեբաններ համարում են, որ բարձր ստեղծագործական ներուժ ունեցող երեխաները տարբերվում են հասարակական ճնշման հանդեպ բարձր դիմադրողականությամբ, ինչպես նաև իրենց տարիքի համար միջինից բարձր ինտելեկտով:

Ստեղծագործական գործունեությունը ոչ թե հատուկ, այլ ընդհանուր կարողություն է, որը հիմնվում է ընդհանուր ինտելեկտի, անձնային որակների և արդյունավետ մտածողության կարողության վրա:

Նախադպրոցականի ստեղծագործական ունակությունների զարգացման խնդիրը ժամանակակից մանկավարժության հիմնախնդիրն է: Նախադպրոցական տարիքը ցանկացած ունակությունների, այդ թվում, ստեղծագործական ունակությունների զարգացման համար առավել բարենպաստ ժամանակահատվածն է: Ն.Ա. Վետլուգինան երեխաների ստեղծագործությունը սահմանել է որպես «ստեղծագործական գործունեության զարգացման սկզբնական փուլ: Միևնույն ժամանակ, երեխայի ստեղծագործությունը կարող է հաճույք բերել իր ինքնաբերությամբ, արտահայտության թարմությամբ: Գեղարվեստական աշխատանքում երեխան իր համար նոր բան է հայտնաբերում, իսկ մյուսները՝ իր մասին նոր բան» [3, էջ 35]:

Հոգեբանական տեսանկյունից նախադպրոցական տարիքը ստեղծագործական կարողությունների զարգացման համար բարենպաստ ժամանակ է, քանի որ այս տարիքի երեխաները չափազանց հետաքրքրասեր են, նրանք մեծ ցանկություն ունեն իրենց շրջապատող աշխարհը ուսումնասիրելու: Այս համատեքստում նախադպրոցական տարիքի երեխաների ստեղծագործական կարողությունների զարգացման խնդիրն առանձնահատուկ նշանակություն է ունենում: Երեխայի ստեղծագործական ունակությունների ձևավորումը ժամանակակից մանկավարժության կարևորագույն խնդիրներից մեկն է: Դրա համար առավել արդյունավետ միջոց է կերպարվեստային գործունեությունը[4, էջ 64]:

Այսպիսով նախադպրոցական տարիքի ստեղծագործական ունակությունները կարելի է անվանել նախադպրոցականի բազմաթիվ հատկությունների միաձուլում: Երեխայի խոսքի, մտավոր և զգայական զարգացման համար անհրաժեշտ է նրան գործունեության մեջ տալ ազատ ընտրության հնարավորություն, որը

հնարավորություն կտա բացահայտել երեխայի ստեղծագործական ներուժը, անհատական առանձնահատկությունները և հնարավորությունները:

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՈՒՂՂՎԱԾ ՍԱՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՈՉ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Հետազոտական աշխատանքի գործնական մասն անցկացրել եմ մարզ Արագածոտնի Օշական գյուղի Անահիտ մանկապարտեզում: Սաների ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացման նպատակով կերպարվեստի պարապմունքներին կատարել ենք ոչ ավանդական նկարչություն:

Ստորև ներկայացնում եմ պարապմունքների մի քանի պլան կոնսպեկտների օրինակներ:

Պարապմունք 1.

Թեմա՝ նկարչություն ճմրթված թղթերով:

Օգտագործվող նյութեր. Ցանկացած գույնի և չափի թուղթ երեխաների թվով, գուաշ, ներկաման, սպունգ, փափուկ ճմրթված թղթիկներ:

Նպատակը՝ ծանոթացնել փափուկ թղթով գնդիկներ անելու ձևերին, սովորեցնել նախշեր ստանալու հնարները, զարգացնել ձեռքի մանր մոտորիկան, երևակայունը, ձևավորել կոկիկ աշխատելու կարողություն, ինքնուրույնություն և նախաձեռնողականություն:

Ընթացքը. Պարապմունքը սկսեցի զրույցով.

Ողջույն երեխաներ, այսօր մենք հետաքրքիր պարապմունք ենք ունենալու: Կարծում եմ բոլորդ էլ սիրում եք ձեր ձեռքի տակ ունեցած թղթերը ճմրթել: Հենց այդ թղթերով էլ այսօր նկարելու ենք: Ես ձեզ ցույց կտամ, թե ինչպես կարելի է այդ թղթերի միջոցով նկարներ և նախշեր ստանալ: Վերցրեք ձեր առջև դրված թուղթը, չմրթեք և հետևեք իմ գործողություններին: Պետք է թուղթը գուաշով ներկենք, այնուհետև հպում ենք մաքուր թղթին:

Պարապմունքը ավարտելուց հետո երեխաները ցուցադրեցին իրենց ստացված պատկերները, պատմեցին, թե ինչ նախշերի են նմանեցում պատկերները:

Պարապմունք 2.

Նկարչություն կարտոֆիլով.

Օգտագործվող նյութեր. Ցանկացած գույնի և չափի թուղթ երեխաների թվով, գուաշ, վրձին երեխաների թվով, ներկման և սպունգ երեխաների թվով, տարբեր չափերի և ձևի կարտոֆիլներ երեխաների թվով, փայտիկներ:

Նպատակը՝ խթանել երեխաների հետաքրքրասիրությունը և երևակայությունը, սովորեցնել աշխատանքային միջոցներից ճիշտ օգտվելու և աշխատելու ձևերը, ձևավորել կոկիկ աշխատելու կարողություն, զարգացնել ինքնուրույնությունը:

Ընթացքը. Զրույց կարտոֆիլի մասին:

Դաստիարակ. Երեխաներ մենք բոլորս սիրում ենք այս բանջարեղենը, ճի՞շտ է: Սակայն այսօր այն չենք ուտելու, այլ կատարելու ենք շատ հետաքրքիր աշխատանք: Տարբեր նախշերի միջոցով, որոնք ես նախապես պատրաստել եմ ձեզ համար, և ջրաներկի միջոցով պատկերը փոխանցելու ենք թղթին: Ուրեմն եկեք ընտրենք ձեզ դուր եկած նախշը: Ես ձեզ ցույց կտամ, թե ինչպես է պետք աշխատել:

Կարտոֆիլը գուաշով ներկելով երեխաներին ցույց եմ տալիս, թե ինչպես պետք է աշխատել: Որից հետո թույլ եմ տալիս ինքնուրույն աշխատել: Պարապմունքի ընթացքում հետևում եմ նաև երեխաների կողմից գույների ընտրությանը: Պարապմունքը ավարտվեց խրախուսական աստղիկներով:

Պարապմունք 3.

Թեմա՝ թելերով նկարչություն.

Անհրաժեշտ նյութեր. թուղթ, տարբեր չափերի թելեր, մկրատ, վրձին, սոսինձ:

Ընթացքը. Պարապմունքը սովորականի պես սկսեցինք թեմատիկ զրույցով: Երեխաներ ձեզ ծանո՞թ են այս թելերը: Ձեր տատիկները հավանաբար այս թելերով ձեզ համար գուլպա կամ գլխարկ են գործում: Սակայն մենք այսօր օգտագործելու ենք դրանք պատկերներ ստանալու նպատակով: Ուշադիր հետևեք ինձ: Պետք է վրձնի օգնությամբ գունավորել թելերը, որոնք ես նախապես սոսնձել եմ սպիտակ թղթին: Պետք է ցանկացած դիրքով երկրորդ թուղթը դնել թելերի վրա և աջ ձեռքի ափով այն հարթեցնել, մինչև հինգը հաշվել և վրայից հանել մաքուր թուղթը:

Պարապմունքը շատ հետաքրքիր էր անցնում, երեխաների համար սա իսկապես նորություն էր, նրանք սիրով և ուրախությամբ էին մասնակցում: Պարապմունքի ավարտին երեխաները միմյանց ցուցադրեցին իրենց աշխատանքները, որոնք շատ ինքնատիպ և յուրօրինակ էին:

Պարապմունք 4.

Թեմա՝ «Կախարդական քաղաքը-ստորջրյա թագավորությունը»

Նպատակը՝ երեխաներին սովորեցնել նկարել ոչ ավանդական տեխնիկայով թաց թղթի վրա, զարգացնել երևակայությունը և ստեղծագործական ունակությունները:

Անհրաժեշտ պարագաներ. սպիտակ թուղթ, գուաշ, սպունգ, վրձիններ, անձեռոցիկներ.

Ընթացքը.

Այսօր մենք ճամփորդելու ենք դեպի կախարդական ստորջրյա թագավորություն: Բայց եկեք պայմանավորվենք չաղմկել, քանի որ ծովը այսօր շատ հանդարտ է: Գույների անսովոր թեթևությունը, նոր գույներ ստանալը հենց նկարի վրա, ձեր աշխատանքը կդարձնեն զարմանալիորեն հետաքրքիր: Դուք ձեզ հրաշագործներ կպատկերացնեք և կախարդական քաղաք կպատկերեք: Դուք կռահեցի՞ք, թե ինչպես ենք մենք նկարելու: Մենք այսօր նկարելու ենք թաց թղթով: Իսկ ի՞նչ է դա թաց թղթով նկարչությունը: Այսօր գլխավոր գործիքը լինելու է փոքրիկ սպունգը: Մենք դրանով թացացնելու ենք մեր թուղթը: Այն թացացնում ենք արագ շարժումներով (ցուցադրում): Այնուհետև թաց թղթի վրա ներկում ենք: Եվ այսպես եթե մենք ուզում ենք զգալ կախարդանքը, ուրեմն մեր նկարչությունն էլ կլինի հեքիաթային:

Մինչ աշխատանքը սկսելը ես կկարդամ ձեզ հեքիաթից մի հատված:

Կար չկար մի ծերունի, որն ապրում էր իր կնոջ հետ ծովի ափին փոքրիկ խրճիթում: Ծերունին ամեն օր ձկնորսության էր գնում:

Երեխաներ ի՞նչ եք կարծում, ի՞նչ գույնի էր ծովը:

Երեխաներ. Կապույտ

Դաստիարակ. Եվ այդ հանգիստ կապույտ ծովում ապրում էր բարի կախարդական «ոսկե ձկնիկը»: Բայց նա մենակ չէր ապրում ստորջրյա թագավորությունում: Երեխաներ ի՞նչ եք կարծում, ովքեր էին ապրում այնտեղ բացի ձկնիկից:

Երեխաներ. Խեցիներ, ջրիմուռներ, խխունջներ, ութոտնուկներ, խեցգետիններ, դելֆիններ:

Դաստիարակ. Իսկ ի՞նչ գույնով ենք նկարելու ծովը:

Երեխաներ. Երկնագույն:

Դաստիարակ. Իսկ ոսկե ձկնիկին:

Երեխաներ. Դեղին, նարնջագույն:

Դաստիարակ. Իսկ ծովի ջուրը շարժվո՞ւմ է:

Երեխաներ. Շարժվում է, եթե քամին է փչում, կամ նավերն են նավարկում:

Դաստիարակ. Ապա նայեք ինչպես եմ նկարելու ծովը: Սպունգով թացացնում եմ թուղթը աջից ձախ արագ շարժումներով: Լայն վրձինով թղթի վերևից գիծ եմ անցկացնում և ներկը իջնում է ներքև: Դուք նույնպես նույնը արեք և թուղթը բարձրացրեք ուղղահայաց, որպեսզի ներկը իջնի ներքև: Մի փոքր ներկը չորանա և

կնկարենք ստորջրյա թագավորության բնակիչներին արդեն բարակ վրձինով: Եթե ցանկանում եք կարող եք պատկերել նաև ոսկե ձկնիկի կախարդական ամրոցը:

Երբ բոլոր երեխաները վերջացրեցին աշխատանքը, թղթերը դասավորեցինք սեղանին և ստացվեց մեծ կախարդական թագավորություն:

Ինչ մեծ հանդարտ ծով է մեզ մոտ ստացվել, և քանի որ ծովը հանդարտ է ոսկե ձկնիկները շատացել են, նրանք բոլորը այնքան գեղեցիկ են: Երբ ես նայում եմ ձեր նկարներին զգում եմ որ այս կախարդական աշխարհում տիրում է բարին:

Պարապմունք 5

Թեմա՝ «Ոսկե աշուն»

Ավանդական և ոչ ավանդական տեխնիկայի համադրում

Պարապմունքը սկսեցինք հարցերով, թե տարվա որ եղանակն է, ինչ գույներով է ներկվում բնությունը: Այնուհետև երեխաները սկսեցին աշխատել: Նախ վրձիններով էին աշխատում, պատկերեցին բնությունը, ծառերը, իսկ տերևները ներկեցին փայտիկներով:

Պարապմունքն ամփոփեցինք աշնան մասին բանաստեղծությամբ և երգով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, ուսումնասիրելով խնդրին առնչվող մասնագիտական գրականությունը և հենվելով իրականացված հետազոտության վրա՝ կարող եմ փաստել, որ

- Ինքնուրույնությունը ձևավորվում է վաղ մանկությունից և ամրապնդվում է ամենապարզ հմտությունների ու սովորությունների հիման վրա: Նախադպրոցական տարիքում աստիճանաբար զարգանում է երեխայի ինքնուրույնությունը, որը դրսևորվում է երեխայի հետաքրքրությամբ, նախաձեռնողականությամբ, ակտիվությամբ և նպատակասլացությամբ: Ինքնուրույնության զարգացման արդյունքը պետք է լինի այն, որ երեխան կարողանա նոր պայմաններում դրսևորել իր գիտելիքները, հմտությունները և դրա հետ մեկտեղ ձգտի գտնել ու իրականացնել գործելու նոր միջոցներ և հնարներ: Երեխայի ինքնուրույնության զարգացումը պայմանավորված է մեծահասակի առաջատար դերով և երեխայի անձնական ակտիվությամբ:
- Նախադպրոցական տարիքի երեխաների ստեղծագործական ունակությունները անհատական հատկանիշներ են, որոնք որոշում են ստեղծագործական գործունեության իրականացման հաջողությունը: Ստեղծագործական ունակությունները կարելի է անվանել նախադպրոցականի բազմաթիվ հատկությունների միաձուլում:
- Հետազոտական աշխատանքի գործնական մասում կազմակերպել եմ ոչ ավանդական նկարչության տեխնիկայով մի շարք պարապմունքներ, որոնք ուղղված էին ավագ նախադպրոցականների ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացմանը: Կատարված աշխատանքից կարող եմ փաստել, որ ոչ ավանդական նկարչության գործընթացը ավագ նախադպրոցականների ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացման արդյունավետ միջոց է հանդիսանում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հոգեբանության արդի հիմնախնդիրները. Գիտական աշխատությունների ժողովածու. Երևան 2016, էջ 18-22
2. Մարության Ս. Ա. Նախադպրոցականի ինքնուրույնության դաստիարակումը միջանձնային հարաբերություններում. Երևան 2008 թ.
3. Ветлугина Н. А. Художественное творчество и ребенок. М. 2009
4. Гусев, Е.О. Творческий процесс и художественное восприятие — М., 2008. 253 – 127 с.
5. Казакова Т. Г. Развивайте у дошкольников творчество. Методическое пособие для воспитателей. М 2001
6. Микляева,Н. В. Несколько слов о развитии и поддержке детской активности и самостоятельности //Детский сад от А до Я. –2008. -No1 –С.17-23.
7. Осмоловская И.М., И.Я. Лернер о процессе обучения: //современное прочтение // 2017. Т.1, №3 (39).